հայ կեանքն ալեկոծող մեծ, այժմէական խընդիրներու շուրջ։

Ազգերու կեանքի մէջ հազուագիւտ երեւոյթ մըն է այս՝ որ պարզ, խղճուկ առեւտրական մը, առանց ուսման ու գիտութեան, սոսկ իր տաղանդի ոյժով յաջողել է այնքան կարճ ժամանակամիջոցում հասնել այնպիսի բարձրութեան, ծաւալել այնքան այլազան կարողութիւններ, տալ այնպիսի վիթխարի գրականութիւն — հիւթեղ, բազմակողմանի ու բովանդակալի — ինչպէս այդ հրաշք-մարդը։ Վիպասան, հրապարակախօս, պատմագէտ ու բարքագէտ — ամէն տեղ նա կը հասնէր եւ բոլոր մարդերու մէջ գեղեցիկ էր, խանդավառող ու յափշտակող։

Հանճարի կնիք մըն է արդէն այն իրողութիւնը, որ 70-ական, 80-ական թուականներուն նա ստեղծեց այն ընտիր լեզուն, որով գրուած են Ջալալէդդինը, Խենթը, Կայծերն ու Սամուէլը։ Արեւելահայ կոպիտ, ու դռեհիկ աշխարհաբարը, որ նոր էր դուրս եկել իր նախնական, Արովեանական շրջաններէն, մէկէն ի մէկ կը դառնար գեղեցիկ, ներդաշնակ, ճոխ ու ճկուն եւ միանգամայն պարզ, դիւրամատչելի գրաբարբառ մը։ Այդ արդէն Ռաֆֆիի պարծանքներէն մէկն է, որու շնորհիւ նա կրցաւ ստեղծել մօտաւորապէս նոյն դիրքը հայ մշակոյթի պատմութեան մէջ, ինչ որ Պուշկին Ռուսաստանում, Դանտէ Իտալիայում եւ Գեօթէ Գերմանիոյ մէջ։ Ստեփաննոս Նազարեանի, Պատկանեանի, Արծրունիի եւ բազմաթիւ այլ գրողներու ծանր ու տաղտկալի արձակը կարդալէ յետոյ՝ Ռաֆֆիի գրուածքներու ընթերցումը իրական վայելք մըն է։

Ոչ մէկը իրմէ առաջ չի տուել այնքան դիւթիչ նկարագրութիւններ հայոց բնութեան, Հայաստանի բարձրաբերձ լեռներու եւ անդընդախոր ձորերու։ Ոչ մէկը չի ցուցադրել հայոց պատմութեան այլեւայլ դրուագները — լուսաւոր եւ մռայլ, հերոսական եւ տխուր, վհատեցուցիչ — այնքան սրտառուչ ու ցնցող գոյներով։ Վայելք մըն է ինծի համար ընթերցումը՝ անդամ այսօր, քառասուն տարի յետոյ։

Ահա Արարատեան դաշտի առաւօտը՝ Մերուժան դաւաճանի հայրենաւեր սխրագործութիւններու ընթացքին («Սամուէլ»էն)։

«Առաւօտ էր, Արարատեան դաշտի լուսապայծառ առաւօտներից մէկը։

Արեւի առաջին ճառագայթների ներքոյ Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագոյն շողքերով, որ աչք էին շլացնում։ Արագածի պսակաձեւ գագաթը չէր երեւում։ Նա դեռ պատած էր ձիւնի պէս ճերմակ մշուշով, որպէս մի ամօթխած հարսիկ, որ սքողում է իւր դէմքը անթափանցիկ շղարշով։ Կանաչազարդ դաշտավայրը, ցօղուած վաղորդեան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենաանուրբ գոյներով։ Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբոյսերը ծփում ու ծածանվում էին եւ դաշտի խաղաղ տարածութիւնը օրօրվում էր սքանչելի ալեկոծութեամբ։

Գեղեցի՜կ էր այդ առաւօտը։ Թռչունները ուրախ-ուրախ նախրում էին մի թուփից դէպի միւսը։ Գոյնզգոյն թիթեռները գոյնզգոյն ծաղիկների նման ցանուած էին օդի մէջ։ Սպիտակ արագիլը, կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թեւերով թափահարում էր շտապելով դէպի Արաքսի մօրուտները։ Ձեռնասուն եղջերուները, վայրենի վիթն ու այժեամը դուրս էին եկել խոսրովի արքայական անտառներից եւ ազատ, համարձակ վազվզում էին շրջակայ մարգերի վրայ։

Չէր երեւում միայն մարդը։

Ամէն առաւօտ արծաթեայ փողերի հնչիւնը, որսորդական բարակների մռնչիւնը, սիգապանծ նժոյգների խրխինջը խռովում էին սորամուտ անասունների վաղորդեան հանգիստը։ Ամեհի վարազը սարսափելով նետվում էր մթին շամբուտների մէջ, իսկ թաւամազ արջը ապաստանի տեղ էր որոնում։ Իսկ այս առաւօտ չը կային նրանք, — չը կային նախարարական իշխանազն պատանիները, որոնց որսորդական ուրախ զուարճութիւնները մի առանձին կենդանութիւն էին բաշխում երէկուան դաշտավայրին։

Ամէն առաւօտ թռչունը կարդում էր իր նախարշալոյսեան մեղեդին եւ նրա հետ լսելի էր լինում ժրաջան մշակի երգը։ Փայլում էր մանգաղը, եռում էր գործը եւ ոսկեղէն հունձքը՝ իր լիառատ բեղմնաւորութեամբ՝ պարգեւատրում էր վաստակաբեկ շինականի աշխա-